


Handwritten text: *Handwritten text*

Handwritten text: *Handwritten text*



ԳՐԻԳՈՐ ԽԱԼԵԹԵԱՆ



1999


6878.

Մ Ո Վ Ս Է Ս Խ Ո Ր Ե Ն Ա Ց Ի

Ե Ի



Ի Ի Ր Ա Ղ Բ Ի Ի Ր Ն Ե Ր Ը




646

ԳՐԻԳՈՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ

(Արտատպած Արարատ ամսագրի 1897 թ. նոյ. եւ Դեկտ. համարից).



ՎԱՂԱՐՇԱԴԱՏ
ՏՊԱՐԱՆ ՄԵՐ ԱԹՈՌՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԵԼԺՆԻ
1898



4791-60

28. 793



1999

Մ Ո Վ Ս Է Ս Խ Ո Ր Ե Ն Ա Յ Ի

Ե Ի

Ի Ի Ր Ա Ղ Բ Ի Ի Ր Ն Ե Ր Ը



Գ Ր Ի Գ Ո Ր Ա Ս Տ ՈՒ Ա Շ Ա Բ Ա Ն



Յայտնի է, թէ ինչ կարևորութիւն են ընծա-
յում այժմ Մովսէս Խորենացու աղբյւրների ու-
սումնասիրութեան. այդ միակ հաստատուն միջոցն
է՝ մեր կարծիքով, որով կարելի էր ստուգել և
ճշտել վերջերս այնչափ հետազոտութիւնների ա-
ռարկայ եղած Հայ պատմագրի հաւաստիւթեան առ-
տիճանը, որպէս և նորա ծաղկելու ժամանակը: Այս
առիթուով ինչ որ Ե. Մանուկեանը Ստանաւորակ
(+399) վերայ և առաջ կը բերենք սորա գրուածք-
ներից այն հատուածները, որոնցից անտարակոյս
օգտուել է Խորենացին:

Պէտք է դիտել, որ Գր. Աստուածաբանի գը-
րուածքները՝ իրենց տեսակով ընդհանրապէս շատ
ընտիր, թարգմանուել են հայերէն՝ նոր Հայկա-
ղեան Բաղրքի կաղմողների ասելով, «Առաջին
Թարգմանչաց» ձեռքով և մինչև այժմ ցաւակցա-
րար դեռ տպագրուած չեն:

Սորանից 10 տարի առաջ Մեծ. պ. Նորայր
հրատարակեց մի քանի հայերէն հին թարգմանու-
թիւնների և Խորենացու մէջ նշանակուած նման
հաստատումներ, որոնց՝ նորա կարծիքով, փոխ է առել
Հայ պատմագիրը իւր «Հայոց Պատմութեան» համար.
այդ թարգմանութիւններն են՝ Վալլիս թէն, Փի-
լոն, Գրիգոր Նազազացի (կամ Աստուածա-
բան) և Գրիգոր Նիւսացի. Արքարեւ մի քա-
նիսը այդ նմանութիւններից նկատել էին դեռ Փի-
լոնի ու Վալլիս թէնի հրատարակիչները և Ն. Հայկ.
Բաղրքի կաղմողները. բայց պ. Նորայր աւելացրեց
մի շարք այլ նմանութիւններ և բոլորը միասին
տեղաւորեց իւր «Քննասերի» Բ. պրակում (էջ
36—63):

Մեր նպատակից դուրս է բացատրել Խորենա-
ցու փոխառութիւնների ծագման սկզբնապատճառը.
բաւական ենք համարում սակայն նկատել առ այժմ
թէ համամիտ չենք յարգելի հայկաբանի այն ժա-

մանակ յայտնած կարծիքին—հետեցնել այդ փո-
խառութիւններից՝ յիշեալ հեղինակների Խորենա-
ցու ձեռքով թարգմանուած լինելը: («Քննասեր»,
Բ. էջ 29—35):

Յատկապէս Գր. Աստուածաբանի ճառերից պ.
Նորայր բերում է 17 դէպք Խորենացու նմանու-
թիւններից (Քննաս., էջ 56—62), առանց սակայն
որոշակի նշանակելու այս կամ այն ճառի մէջ
հետաքրքրող մասերը կամ էջերը, որովհետեւ
Ստոքհոլմ նստած, չունէր նա իւր ձեռքին կարևոր
գրչագրեր և աշխատում էր միայն Ն. Հայկ. Բաղ-
րքի օգնութեամբ:

Անցեալ ամառ՝ Ս. Էջմիածնում և Վիեննա-
յի Գեր. ՀՀ. Մխիթարեանց վանքում զրադուելիս,
առիթ ունեցանք մենք ծանօթանալ ի միջի այլ
գրչագրերի և Գր. Աստուածաբանի անտիպ ճառե-
րին, ուր գտանք նոր՝ դեռ ուրիշներից ուշագրու-
թեան չառնուած, բազմաթիւ նմանութիւններ Խո-
րենացու «Հայոց Պատմութեան» հետ. Այդ իսկ
նիւթերն են, որ լրացնելով «Քննասիրում» հրա-
տարակուածներով* և կարգի բերելով, առաջար-
կում ենք մասնագէտներին:

Գր. Խալաթեանց.

34 ժողովուրդ 1897 թ.
Մոսկուա,
Լազարեան ձեռնարան.

* Պ. Նորայրի հրատարակածները ստացանի-
շով (*) ենք նշանակում մեր համեմատութիւնների
մէջ:

Дозволено цензурою, 4 Ноября 1897 г. Тифлисъ.



Մ. ԽՈՐԵՆԱՅԻ

ԳՐ. ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ.

1.

Խոր. (Ա, 4). — «...զորոյ զպատճառն յետոյ հատուցուք»:

Գր. Ածարան. — «...զկատարելագոյն պատճառն յետոյ հատուցուք, յորժամ յաղագս ոչ գրեցելոց խօսիցիմք» — (Առ որս, գրչ. Վիէնա Մխթ. Հ. 96, էջ 61 Բ.)

2.

Խոր. (Ա, 6). — «Արդ զայսոսիկ թէպէտ առասպելի ոք, թէպէտ ճշմարտութիւն հաշուել համարեցի, բայց ես որպէս հաւանեալ եմ բազում ինչ ճշմարիտ է»:

Գր. Ածարան. — «Եթէ ճշմարտութիւն այսոքիկ իցեն եւ եթէ առասպել որ ցուցանիցէ ճշմարտութիւն» ստեղծմամբն» — (Առ Յուլիանոս, Բ. գրչ. Ս. Էջմիածնի, Հ. 908, էջ ՄԻԵ².)

3.

Խոր. (Ա, 18). — «Այլ թէ ախորժես առասպել՝ եւ Շամիրամ քար առաջի քան զՆիոբէ»:

Գր. Ածարան. — «Եւ եթէ ախորժես՝ բանին զքաջահասոյնն ի բանին ... առաւելեաց» — (Առ Աթանասիոս, գրչ. Վիէն. Մխթ. Հ. 217, էջ 109 Բ.)

4.

Խոր. (Ա, 24). — «Հետեւակամարտն ի վերայ ուսոց ձիոց բերեալք ...»

Գր. Ածարան.* — «Զճառացս մեղաց ի վերայ ձիոց բերեալք» — (Ի Ժողովողն, գրչ. Վիէն. Մխ. Հ. 217, էջ 248 Բ.)

5.

Խոր. (Ի Պարս. Առասպ.). — «Մի արդիօք յունական պերճ եւ ողորկ առասպելք իցեն հանդերձ պատճառաւ, որք ճշմարտութիւն իրացն ալլարանաբար յին»:

քեանս ունին թագուցեալ»:

Գր. Ածարան. — «Եւ եթէ ճշմարտութիւն այսոքիկ իցեն եւ եթէ առասպել որ ցուցանիցէ ճշմարտութիւն» ստեղծմամբն» — (Առ Յուլիանոս, Բ. գրչ. Ս. Էջմ. Հ. 908, էջ ՄԻԵ².)

6.

Խոր. (Բ, 9). — «Մի՛ որ անհաւատացի, քանզի մեզէն իսկ ախանտես եղաք այն դիւանին»:

Գր. Ածարան. — «Անհաւատացի մի որ, քանզի եւ ոչ այլոց Աստուծոյ զաւրութեանցն» — (Առ Յուլիանոս, Բ. գրչ. Հ. 908, էջ ՄԶ.)

7.

Խոր. (Բ, 38). — «Բայց Երուանդայ զմտաւ ածեալ, թէ որպիսի չար թագաւորութեան նորա մնանի ի Մարս»:

Գր. Ածարան. — «Իբրեւ տեսի ես զայրն (զՅուլիանոս), ժողովեալի ապացի որպիսի չար Հռովմայեցոցն մնանի» — (Առ Յուլիանոս, Բ. Անդ. էջ ՄԺԶ¹.)

8.

Խոր. (Բ, 63). — «Աւաղելով (Երանեակ) զինքըն, իբր չքնաղաղել ընդ վատակերպոյ եւ քաջատոհմիկ ընդ վատթարազգոյ բնակէ»:

Գր. Ածարան.* — «Մի՛ անարժան վարկցիս ընդունել զմկրտութիւն ընդ աղքատին՝ ճոխդ, քաջատոհմիկ ընդ վատթարազգոյն» — (Ի մկրտութիւն հասարակաց, գրչ. Վիէն. Մխթ. Հ. 217, էջ 226 Բ.)

9.

Խոր. (Բ, 80). — «Որպէս կամք են իմոյս ասել քանի»:

Գր. Ածարան.* — «Որպէս կամք են ասել իմոյ քանի» — (Տէս պ Երայրի «Բնասեալ», Բ. էջ 57.)

10.

Խոր. (Բ, 80). — «Որք (Ս. Արիստակէս եւ Ս. Վրթանէս) ոչ զպատիւն յինքեանս ձգէին, այլ պատիւն

զնետ նոցա ընթացաւ»:

Գր. Ածարան. — «Ոչ գողանայր (Ս. Բարսեղ) զիշխանութիւնն եւ ոչ յափշտակէր եւ զնետ ընթանայր զպատուոյն, այլ պատիւն զինի գայր» — (Առ Բասիլիոս, գրչ. Վիէն. Մխ. Հ. 217, էջ 140 Բ.)

11.

Խոր. (Բ, 88). — «Բայց զոր աստուածային Բանն առ Երայրեցոցն անհրեարին համարեալ՝ զարութեանն փոփոխումն նոյն եւ աստանօր պատահի (ընդ Լիկիանոսի). ընծու անկարելի է զհայտուցն փոխել եւ Եթովպացոյ զթըխութիւնն նոյնպէս մարդոյ ամբարշտի զբարսն»¹

Գր. Ածարան. — «...զի եւ ոչ ունէր իսկ բընութիւն ինծ ի բաց զնել զհայտուցս եւ կամ Եթովպացոյն զսեռութիւնն, կամ հաշտեցութիւնն ի սկզբանն մարգասպան հանդիպեալ (Յուլիանոս), եւ կամ զայն չարութիւնն որով հակառակ մեզ զիմեաց այլ որպէս ի յաղագս գեանաօրէնուն է բան՝ ամենայն դիւրաւ լինել եւ զամենայն փոփոխել եւ առնուլ զոյնս, բայց ի միջէ ի սպիտակութենէն...» — (Առ Յուլիանոս, Ա. գրչ. Ս. Էջմ. Հ. 908, էջ ԾԿԹ.)

12.

Խոր. (Գ, 89). — «...որ ըստ արժանեաց իւ-

1. Պրոֆ. Կարիեր՝ սպացուցանելով Խորենացու Խորիկի Լիկիանոսի պատմութեան մէջ (Բ, 88) Ս. Բասիլիոսի վարժից օրհուրը, Լեւոնտուրմ եւ որ՝ Հայ պատմագրի նոյն տեղ յիշածը — «ընծու անկարելի է զհայտուցս փոխել եւ Եթովպացոյ զթըխութեանն» — ստեղծած պիտէ ե յինի նոյն վարժից, «գոր Ս. Խորենացի գործածած եւ յետոյ անկարելի էր կամ ե յետոյ մէկ մասին խաղաղութեան ընթացքն» (Խորենացոյն աղբիւրք Ս. Խորենացոյ, Ազգ. Մատենադարան, Բ. էջ 25.) Ընդունելով հանդերձ այս Լեւոնտուրմեան հաւանականութիւնը, տեսնում ենք սակայն, որ Գր. Աստուածաբանի մեր մեջ քննած հաստատելի անձանք եւ անհետեւեալ ի մեզից Խորենացու հաւեր:

լոց ամբարշտս այս Արիոս ի զարշեղիւն ընկալաւ զսատակումն»:

Գր. Ածարան.* — «Այսմ կատարութեանս սկիւրն արար Արիոս ... որ եւ գատաստան եւ զանարգել լեզուոյն ի զարշեղի տեղիսն ընկալեալ զսատակումն» — (Առ Աթանասիոս, գրչ. Վիէն. Մխ. Հ. 217, էջ 110 Բ.)

13.

Խոր. (Բ, 91). — «Սիրեցեալ (Ս. Դրիգոր) զերինս եւ զամայութիւն եւ զհանդարտութեամբ մտաց յինքեան կեալ զի խօսիցի ընդ Աստուծոյ անգրադապէս»:

Գր. Ածարան. — «Մին պատուէ զփախուստըն եւ զերինս եւ զամայութիւնս եւ զհանդարտութիւն զհոգեւոյ եւ զմարմնոյ եւ զմտացն յինքեանս երթալ զընալ եւ անդին գառնալ ի «գայութեանց, որպէս զի խօսիցի առանց աղոյց ընդ Աստուծոյ ...» — (Յինքն եւ ի հայրըն, գրչ. Վիէն. Մխ. Հ. 217, էջ 105 Բ.)

14.

Խոր. (Բ, 92). — «Արք, Արամեանք, մինչեւ յերբ էք ծանրասիրտք. ընդէր սիրէք զանրութիւն եւ զանաստուածութիւն»:

Գր. Ածարան.* — «Որդիք մարդկան, մինչեւ յերբ էք ծանրասիրտք, նախաշաւղեմ առ ձեզ ի մեծաձայնէն Դաւթայ, ընդէր սիրէք զանրութիւն եւ ինդրէք զստութիւն» — (Ի բանս եւ ի հաւասարեցուցիչն, գրչ. Վիէն. Մխ. Հ. 217, էջ 171 Բ. — Եւս՝ «Առ Ս. Գրչ. Վիէն. Մխթ. Հ. 96, էջ 157 Բ. նոյնպէս՝ «Ի Կեսարոս, գրչ. Հ. 217, էջ 120 Բ. Նոյնը տես եւ Սաղմոս, Դ, 3, որ ունի սակայն «խըստասիրաք» փոխ. Գր. Աստուա-

ճարանի «ճանրասիրտք»-ի։)

15.

Խոր. (Բ, 92). — «Որ շատխօսութեանն հոսանք իրրեւ յաղըրէ դիմն որպէս ասաց ոմն ի հնոցն։»

Դր. Ածարան. — Զինչ պաճուճանացն յայնցանէ բարի իցէ կամ ո՞ր օգուտ է բազում բանիցն, ուր շատխօսութեանն հոսանք իրրեւ յաղըրէ դիմն յանգայութեանէն։ — («Ի ժողովոյն» գրչ. Վիէն. Մխ. Հ. 217, էջ 245.)

16.

Խոր. (Բ, 92). — «Որ շատխօսութեանն հոսանք իրրեւ յաղըրէ դիմն, որպէս ասաց ոմն ի հնոցն, և զկծեցուցանեն զամենայն զինարքուն ի հրապարակս։»

Դր. Ածարան*. — «Եւ պատշաճ համարիմ զամենայն հրապարակն շուրջանակի հնչեցուցանել այնպիսի բանիւք զամենայն զինարքուն զկծեցուցանել շատխօսութեամբ և աղճատանօք։» — (Առ որս, գրչ. Վիէն. Մխ. Հ. 96, էջ 7.)

17.

Խոր. (Գ, 13). — «Բազմադիմի ջանայր (Թուլիանոս) շիջուցանել զհաւատք թիտոնէութեանս, բայց ոչ ընտելեալ հաւանեցուցանէր, այլ խորամանկեալ հնարէր, զի ղեւք երկրպագեցին։»

Դր. Ածարան. — «Եւ եթէ հանդերձ արուեստիւ զինիցի (Թուլիանոս) և հաւանեցուցանելովն զընտելեալ զունիցէ, իրրեւ զկարծիւ շուրջ զգէշն պատելով... որպէս ասէ քո Հոմերոն, զի զոք պատուելցէ և ղիւացն ստեղծմամբ զըստորինսն։» — («Առ Թուլիանոս» Ա. գրչ. Ս. Էջմ. Հ. 908, էջ ԾԿԳԶ.)

18.

Խոր. (Գ, 13). — «Եւ յորժամ գնա (գթուլիանոս) Ընդդէմ Պարսից իրաւունքն զինեցին, և անցեալ ի

Կիլիկիայ հասանէր ի Միջագետս։»

Դր. Ածարան*. — «Եւ յորժամ հակառակ Պարսից գնա (գթուլիանոս) իրաւունքն գեղեցկապէս զինեցին, եկն առ մեզ փախստական երանելին...» — («Ի Կեսարոս» գրչ. Վիէն. Մխ. Հ. 217, էջ 118.)

19.

Խոր. (Գ, 13). — «... զՏիրան արձակէ (Թուլիանոս) և յիւր աշխարհն և տայ զիւր պատկերն նկարագրեալ ի տախտակս, յորում և զղիւաց ոմանց ընդ նմա. և հրամայէ յեկեղեցիս կանգնել յարեւելից կուսէ. ասելով, թէ որք միանգամ ընդ Հռովմայեցոց տէրութեանդ հարկին՝ զոյնպէս առնեն։ Զոր յանձին կալեալ Տիրանայ, առեալ բերէ. ոչ ածելով զմտաւ, թէ իւր բէռութեամբ՝ զիւաց երկրպագին պատկերքս։»

Դր. Ածարան. — «Աւրէնք են թագաւորականք... բայց Հռովմայեցոց յոյժ ի փութութեան պատկերաւք բազմամարդութեանն 2) պատուել զթագաւորս, Բանդի ոչ բաւական, պատկեր և թագքն և ծիրանեացն ծաղիկք... այլ պարտ վարկանին և զերկրպագութիւնն ևս ի նոցանէն։... Իսկ նա (Թուլիանոս) զինչ հնարէր և կամ զինչ քրիստոնէից հաստատութեանն կացուցանէր նենդութիւն... ի մի ածէր զաւրէնս Հռովմայեցոցն և զկռոցն երկրպագութիւն։ Եւ յաղագս այնորիկ առ պատկերսն մերձ գրէր զղեւն և իբր զայլ ինչ ի սովորական գրեցելոցն առաջի զնէր բազմամարդութեանն 2) և քաղաքաց...»

2 «Բազմադիմադիր» (ընտելիւր՝ ἐντρυφώμενος = հրապարակաւ) Խորեանցին փոխել է «եկեղեցի»։

— («Առ Թուլիանոս» Ա. գրչ. Ս. Էջմ. Հ. 908, էջ ԾՀԸ — ԾՀԹ.)

20.

Խոր. (Գ, 17). — «Ետ այսր ամենայնի ամբարիշտն Թուլիանոս քստ արժանի խորհրդոյն վէր ընկալեալ ի փորոտիսն սատակի ի Պարսս։»

Դր. Ածարան. — «Եթէ ոչ գեղեցկապէս կերակրեաց արեամբն այնորիկ և վիրաւն, զոր ի փորոտիսն ընկալաւ — (Թուլիանոս)։» — («Առ Թուլիանոս» Ա. գրչ. Վիէն. Մխ. Հ. 217, էջ 186.)

21.

Խոր. (Գ, 32). — «Պիղեալ երկուս խորս յոյժ քաջախորս եւ սաստկապէս լայնս։»

Դր. Ածարան. — «Եզերութ... յոյժ քաջամեծք եւ սաստկապէս դերք։» — («Առ Բասիլիոս» գրչ. Հ. 217 էջ 136.)

22.

Խոր. (Գ, 37). — «Զմիջապացն մանուածս ահագին ընդանարացութեամբ ուռուցեալ ի փշմանէ օդոյն։»

Դր. Ածարան. — «Վիշապացն ահաւոր ընդանարացութեամբ շնչեցեալք և ձգմամբ փողփողեալք մանուածովքն խայտարեալ անկուածովքն...» — «Զի զօրինակ վիշապի շարժեցելոյ մանուածքն ոմանք անդէն արագագոյն ամբառնան...» — («Առ Թուլիանոս» Ա. գրչ. 217, էջ 182 Բ. և 187 Բ. Տես նաև «Քննասեր», Բ. էջ 58 59)

23.

Խոր. (Գ, 61). — «... առեալ Մեծին և Մեծորպայ զմեզ առաքեցին յԱղեքսանդրեայ՝ ի լեզու պանծալի, ի ստոյգ յօգանալ ծեմարանին վերաբանութեան։»

Դր. Ածարան. — «Ոչ զարդարի (Կեսարոս) Պղատոնի և Արիստոտելի և Պիլոսոփի և Դիմիտրիոսեայ ու

մամբք, որք ի պանծալի ծեմարանէն և յԱղեքսանդրեայ։»

— («Ի Կեսարոս» գրչ. 217, էջ 118.) — «Վասն այսորիկ զԱրիստոտելականն, զԱղադիմացիսն և զպանծալի ծեմարանն... այսու պատկեալ...» — («Ի Մաքսիմոս» գրչ. Հ. 217 Վիէն. Մխ. էջ 167.)

24.

Խոր. (Գ, 62). — «Թեթեւակի ընդ խորս դիւանին (Եգիպտոյ) նաւեալ անցաք։»

Դր. Ածարան. — «Թեթեւագոյնս նաւէր (Բասիլիոս) ընդ կենցաղոյս ծով...» — («Ի Բասիլիոս» գրչ. Վիէն. Մխ. Հ. 217, էջ 146.) — «Թեթեւապէս գեր ի վերոյ քան զհերձաւորոսն նաւելով...» — (Անդ, էջ 148.)

25.

Խոր. (Գ, 65). — «Գազաղացան մոզուցն լեզուք։»

Դր. Ածարան*. — «Գազաղացան լեզուք չարք և անօրէնք։» — («Ի Բասիլիոս» գրչ. 217, էջ 147.)

26.

Խոր. (Գ, 67). — «Պատուեաց (Ս. Սահակ) զպատկերն, պատկառեաց ի կոշականէն, փոխանօք զկեաց զկեանսն։»

Դր. Ածարան. — «Եղիցուք մաքուրք Արարչին, պատուեսցուք զպատկերն, պատկառեսցուք ի կոշմանէն, փոխադրեսցուք զկեանսն։» — («Ի բանս և ի հաւատար» գրչ. 217 Վիէն. Մխ. էջ 171.)

27.

Խոր. (Գ, 65). — «... առեալ (Վռամայ) յաթոռ եպիսկոպոսապետութեանն զայլ ոմն ասորի, Ծմուէլ անուն, զի լիցի ընդդիմադիւմ մեծին Սահակայ եւ հակառակածոք։»

Դր. Ածարան. — «Մին համակամ և տխուրակից (Աթանասայ), իսկ միւս ընդդիմադիւմ եւ հակառակա-

թող. և մին զանունս բայց
միւսն ճշմարտութիւն ունէր
զփոխանորդութիւնս — (Առ
Աթանասիոս) զրչ. Վիկեն. Մխ.
Հ. 217, էջ 110^ա.)

28.

Խոր. (Գ. 65). — «Բայց թէ ասիցէ որ, պարտ
է մեզ զասացեալսն մեծի Սա-
հակայ ի Պարսից հրապարակա-
խօսութեանն զրելի զիտասցէ...
զի և ես այր եմ ծերացեալ
եւ հիւանդոտ և անպարպ ի
թարգմանութեանց և զերագե-
լըն միայն խոկացի... զի և քո
կամքդ կատարեսցին և ես
ճողպրեցայց ի քոց հարկեցու-
ցանող բանից և աղաչանաց...»

Գր. Ածաքան. — «Պարտ և արժան է առն
առաքինոյ առ հանճարեղս բա-
նի զիմաստութիւնն զօրացու-
ցանելի բայց ես ծեր եմ և
ընդ երկայն կենաց անցի ժա-
մանակի աշխատեցայ ի գտանել
զաստուծոյ հաճոյսն ի ձեռն
ճշմարտութեան խորհրդոյն»
(«Ի Ժողովոյն» զրչ. Վիկեն. Մխ.
Հ. 217, էջ 249^բ.)

— «... փասն զի փտահանալով
յազազս քո զբանս հաստա-
տեցի: Ապա թէ հեռի և յոյժ
ի բացեայ յուսոյն, զինչ պարտ
է ինձ կրել ծերութեամբ եւ
հիւանդութեամբ և քո անձ-
կով հաշեցելու մաս...» —
(«Առ Բասիլիոս» զրչ. Հ. 217,
էջ 150^ա.)

29.

Խոր. (Գ. 67). — «Զպարկեշտն զայն մարմն
(Ս. Մեսրոպայ) եւ նախ քան
զմահն կրթեալ ի մեռելութիւնս»
— (Տէս. Պ. Սորայրի «Քրնա-
նասէր» Բ. էջ 60.)

30.

Խոր. (Գ. 68, Ողբք). — «Ողորմիմ քեզ, եկե-
ղեցի Հայաստանեայց...»

Գր. Ածաքան. — «Ողորմիմ քեզ, ով եկեղե-

ցիդ, առ քեզ է բանս Անտիո-
քոս քաղաքի...» — (Առ Մե-
լիտոս) զրչ. Հ. 217, էջ
156^բ.)

31.

Խոր. (Ողբք). — «Ոչ եւս տեսանեմ զբանա-
ւոր քո հօտ ի վայրի դաշարուջ
և առ ջուրս հանգստեան առ-
ծեալս... այլ ցրուեալս անա-
պատաց և զանալիժութեանց...»

Գր. Ածաքան.* — «Եթէ պարտ իցէ զՍողոմո-
նին ասել պսակել. զհօտս
տարակուսեալ ի վայր անկեալ
տեսանեմ. որքան լի տրամու-
թեամբ և տխրահօք. ոչ եւս
ի անդուջ դաշարոյ հանդուցեալ
և ոչ ի ջուրս հանգստեան
անեալ՝ խնդրէ զանալիժութե-
ան և ամայութիւնս...» —
(«Ի Հայրն» զրչ. Հ. 217, էջ
126^ա.) Հմմտ. նաեւ Սաղմոս
ԴԲ, 2.)

32.

Խոր. (Ողբք). — «Ողորմիմ քեզ, եկեղեցի Հա-
յաստանեայց...» Երանի առաջ-
նոյ և երկրորդի փոփոխմանն...»

Գր. Ածաքան. — «Ողորմիմ քեզ (ով եկեղեցիդ
Անտիոքոս) յանկարծակի փո-
փոխմամբդ (var. փոփոխմանդ)
այրուիկ) զիարդ անզարդացաւ
զեղեցկութիւնդ, զիարդ կողոպ-
տեցաւ զարդն...» — (Առ Մելի-
տոս) զրչ. Հ. 217, էջ 156^բ.)

33.

Խոր. (Ողբք). — «(Հարուն.) զի եր ինչ ժա-
մանակ հեռանալոյ փեսային և
փեսաւորին, և հարսնոյ համ-
բերեցեր՝ ողջախոհութեամբ
զամուսնութիւն պահելով, որ-
պէս ոմն նախքան զմեզ իմաս-
տասիրեաց: Դարձեալ մինչև

3. Այս մասը Իրիգոր Երևանացու և Կ (+394)
բայց հայ գրչագրերը սխալմամբ Գր. Աստուածաբանի մա-
սերի մէջն են դասում եւրան միջս: (Տէս Յուդակ հայեր.
մեռագր. Վիկեն. Մխիթ. Հ. 3. Տաշեակի եւս եւ Kra-
binger, Oratio in Meletium. Monachii, 1838.)

երբեմն ոմն սեղեխաբար յան-
դգնեալ յարձակեցաւ յանա-
րատ առաքաստղ եւ հարսնոյ
ոչ աղտեղացար...»

Գր. Ածաքան.* — «... ով ասիցէ մանկանց (var.
եկեղեցւոյն մանկանց), թէ որք
եղեն. ո՞ր պատմեցէ հարսին,
թէ այրի մնաց...» նահատակն
ի հանդէս կոչեցաւ և նահա-
տակէր յաղազս ճշմարտութեա-
նըն քրտամբք. իսկ հարսն համ-
բերէր ողջախոհութեամբ զա-
մուսնութիւնն պահելով: Ժամա-
նակ էր ի մէջ յով. եւ ոմն
սեղեխաբար յանդգնէր յանա-
րատ առաքաստն. այլ հարսն ոչ
աղտեղանայր...» — (Անդ. էջ
157^ա.)

34.

Խոր. (Ողբք).* — «(Շարուն.) Սակայն դու և
ոչ այնմ զքեզ ամացի բոլորիցն
ցուցեր զատուցս քոյդ յու-
սալով դարձ...»

Գր. Ածաքան. — «(Շարուն.) յայնժամ միւի-
թարէր զբաժանումն անդրէն
դառնալոյն յոյս...» — (Անդ.
էջ 157^բ.)

35.

Խոր. (Ողբք). — «(Շարուն.) Իսկ յերրորդ
հեռանալս ոչ է անկալու-
թիւն դարձի, լուծեալ ի մարմ-
նոյս ընկերաւն և զործակա-
ւըն: Ընդ Բրիստոսի լաւ է
նոցա բնակիլ և յԱրարամնա-
նըն հանգել զոգս և զհրեշտա-
կայն տեսանել պարաւորու-
թիւնս: Բայց անհոգող դու
այրութեամբդ և եղկելիք մեք՝
որ զրկեցաք ի հայրենի վերա-
կացութենէն:»

Գր. Ածաքան. — «Դարձեալ վերստին ճանա-
պարհ և դարձեալ փախուստ.
երրորդ անգամ նոյնպէս մին-
չև քայքայէր զհերձուածողա-
կան մառախուղն Տէր... Բայց

այժմ զվերջին մեզ որ ոչ ումն
բաժանեցաւ վիհ մեծ ընդ մէջ
նորա և եկեղեցւոյն ի հասա-
րակածին հաստատեցաւ: Նա
ի զոգսն Արարամնոյ հանգել և
որ բերէ զկաթ զրոյն, զի զո-
վացուցէ զվշտանգելոցն զը-
զու, ոչ որ է: Եւ մնա լաւա-
գոյն էր ընդ Բրիստոսի լինել՝
լուծանելով ի մարմնոյն, բայց
մեզ չար որոշել ի հայրենի վե-
րակացութենէն:» — (Անդ. էջ
157^բ, 156^ա.)

36.

Խոր. (Ողբք). — «(Շարուն.) Զի ոչ որպէս
ի հնունձ ժողովուրդն այն, այլ
առաւել մեր է թշուառութիւն,
վասն զի Մովսէս բարձեալ լի-
նի և Յեսու ոչ յաջորդէ ա-
ռաջնորդել յերկիրն Աւետեաց:
Ռորովամ մերժեցաւ յիւրմէ
ժողովրդենէն...»

Գր. Ածաքան. — «... որով պառազինութեամբ
առ ի չարին խորհախուժիւնս
զինեցայց, ո՞ր Մովսէս այսմ
յաղթեցէ...» ո՞ր Յեսուս յետ
նորա զօրավարութեամբ աս-
տուածային պատերազմացն հան-
դերձ մեք պատերազմեցէ...
ոչ և Յորոքովամ...» — (Յա-
ղագո ի ձեռնադր. հրաժարա-
րիւոյ, զրչ. Վիկեն. Մխիթ.
Հ. 217, էջ 110^ա — 110^բ.)

37.

Խոր. (Ողբք). — «(Շարուն.) պատերազմ
զմեզ շրջապատեաց և Մակա-
բէ ոչ փրկէ: Այժմ մարտք
ի ներքուստ և արհաւիրք ար-
տաքուստ. արհաւիրք ի հեթա-
նոսաց և մարտք հերձուածո-
ղաց և խորհրդականն չէ ի մի-
ջի՝ որ խրատէր և յարմարէր
ի պատերազմ:»

Գր. Ածաքան. — «(Շարուն.) 35-որդ հատուա-
ծի.) ի հայրենի վերակացու-
թենէն: Վասն զի ահա խոր-



հրդեհան ժամանակ, և խորհրդակիցն լռեալ է. պատերազմ՝ զմեզ շուրջ պաշարէ, պատերազմն հերձուածողական, և որ զօրավարն լինի՝ ոչ ոք է. վստահի հիւանդութեամբ հասարակաց մարմին եկեղեցոյ, և զբժիշկն ոչ գտանեմք:» (Առ Մեկիսոս: Անդ, էջ 156^ա.)

38.

Խոր. (Ողբ). — «Շարուն.՝ Աւաղ զրկանացրս, աւաղ թշուառական պատմութեանս. որպէս զախտս հանդուրժեցից բերել, զիւնդ զմիտս իմ և զլեզուս անդեցից և հատուցից զբանս հարցն՝ փոխանակ ծննդեան և օննդեանն:»

Գր. Ածաբան. — «Շարուն.՝ Տեսանէք յորպիսի մեր իրքս կան. կամիմ եթէ որպէս կարողութիւն է անդեղով զիմ տկարութիւնս երանել ի վերայ քան զծանրութիւն թշուառութեանս արձակել ձայն արժանաւոր ախտիս, որպէս առաքինիք այնքիկ արարին մեծաձայն ի վերայ հօրն թշուառութեան ողբալով: Այլ զինչ կրեցից, զիւնդ բռնադատեցից զլեզուս ի սպասաւորութիւն բանիս ... Ո՛վ թշուառական պատմութեանն այնորիկ ...» (Անդ, էջ 156^ա, 157^բ.)

39.

Խոր. (Ողբ). — «Եւ մինչ նոքա զմերն յուսային դարձ ... համայն և մեր զիմեալք փութապէս ի Բիւզանդիոյ, յուսայաք հարսանեաց պարել անվհեր երազութեամբ կրթեալք, և առաքատի ասել երգս, արգ փոխանակ խրախճանութեանն ի վերայ գերեզմանի ողբս ասելով՝ ողորմելի հառաչեմ. ուր

և ոչ տեսութեանն ժամանեցի աչաց նոցա կափուցմանց և լրսել զվերջին բարբառն և զօրհնութիւն:»

Գր. Ածաբան. — «Յայնժամ իբրեւ ի հարսանիս պարէալք և այժմ ողորմելի ի վերայ ախտիս հառաչիմք. յայնժամ առաքատի երգք և այժմ ի վերայ գերեզմանի ողբք, վստահ բարձաւ ի մէջ քաջ փեսայն (Մեկիսոս եպիսկոպոսն Անտիոքոյ):» — (Անդ, էջ 156^ա.)

40.

Խոր. (Ողբ). — «Ո՛ր է քաղցր աչացն հանդարտութիւն առ ուղիղս և ահաւորութիւն առ թիւրս. ո՛ր գուարթ շրթանցն ժպտումս առ բարի աշակերտացն հանդիպումս ...»

Գր. Ածաբան.* — «Ո՛ր է պայծառ առաքատի այն հոգւովն որով յամենայն ժամ ուղղեալ ... ո՛ր քաջ նաւուղիդ, որ զվերինսն դիտելով ուղղէր զնաւն ... ո՛ր է քաղցր աչացն հանդարտութիւն, ո՛ր գուարթ շրթանցն ժպտումս ...» — (Անդ, էջ 156^բ.)

41.

Խոր. (Ողբ). — «Կորեալ ժողովողն, թագեալ նաւահանգիստն, ելիք օգնականն, լռեաց ձայնն յորդորեցուցիչ:»

Գր. Ածաբան. — «Կորեալ գեղեցկութիւնն այն, լռեաց ձայնն, կարկեցան շրթունքն, թռեալ շրնորհն:» — (Անդ, էջ 157^բ.)

42.

Խոր. (Ողբ). — «Ո՛վ կարկեցէ զյանդգնութիւնն ընդդէմ՝ առողջ վարդապետութեանն հակառակ յարուցելոցն, որք ամենայն բանիւ քակտեալք եւ քայքայեալք յուրմի փոփոխն վարդապետս եւ բազում՝ զիրս

որպէս ասաց ոմն ի հարցն:»

Գր. Ածաբան. — «Բայց զինչ ասիցէ որ վստահութեան և կամ վստահութեան ի բարձունս խօսողացն ... ոչ ընդդէմ՝ Մոսիսի, այլ ճշմարտութեան զինեցելոց և առողջութեան վարդապետութեան հակառակ յարուցելոց, որք երբորդ մասին յազա անխրատութեան և որ զհեա նորին երթան իրարմութեան յախուռն ամենայն բանիւ զիմեն վարդապետ ախտիւն և կոխեն զգեղեցիկ մարգարիտս ճշմարտութեան, որք միանգամ և ոչ մի ինչ ինքեանց կարծիս բերեն ... այլ երբեմն յայլմէ դանդաղեալք և շրջեալք և ամենայն բանիւ քակտեալք եւ կոխեալք ...» — «Յազա ի ձեռնադր. հրաժարելոյ» զր. Վիէն. Միս. հ. 217, էջ 96^ա.)

43.

Խոր. (Ողբ). — «Շարուն.՝ առ ամենայն բան նմանապէս դժուարին եւ չար օրինակ զրեն զայն անձնի՝ զծիծաղելն զմեզ եւ զայն մարտն իբրեւ զանհաստանովք եւ որ ոչինչ (var. որ ինչ) պիտանացու ունիցի արուեստս:

Գր. Ածաբան.* — «Շարուն.՝ Ո՛վ անբանութեանս, առ ամենայն բան նմանապէս դժուարին եւ չար օրինակ ինքեանց զրեն զայն զ[ի] ծիծաղելն զմեզ զարհամարհելն իբրեւ զանհաստանովք եւ որ ինչ առողջադոյնս ունիցի և զհաւատովն զանցանեն անհանձարաբար յասողացն ի բանս ...» — (Անդ, էջ 96^ա.)

44.

Խոր. (Ողբ). — «Զ մտաւ զայսոսիկ ածելով հառաչումն յիս ի ներքս ընթանայ եւ արտօսը և կամեցուցանէ բարբառել բան տրիւրական եւ սզաւոր:»

Գր. Ածաբան. — «Եւ յիս սարսափումն իմն ի ներքս ընթանայ եւ արտօսը միանգամայն յիշելով զըսքանչելիսն ...» — «(Ի Զոյրն» զր. Վիէն. Միսիթ. 217, էջ 125^ա.)

— «Լուայ և ձայնս ոմանս ի յերեմայէ տխրականս եւ սրգաւորս, որովք յամայնալքազարին Երուսաղէմացոց ողբայր:» — «Յազա ի ձեռն. հրաժար.՝ Անդ, էջ 96^ա.)

45.

Խոր. (Ողբ). — «Ո՛վ մեզ յայսոսիկ ճառակցէ հաւասարելով տրամութեանս և օգնեցէ ախտացելով ասիցս ... Զարթիր Երեմիաս, զարթիր և ողբա հանդերձ մարգարեութեամբ որ ինչ թշուառացաքս և որ ինչ թշուառանալոցս եմք ...»

Գր. Ածաբան. — «Որ որ յերեմիաս ողբացէ զմեր խառնակութիւնս և զխաւարս, որ միայն գիտէր հաւասարեցուցանել զողբս ախտիցն ...» — «(Առ Աթանաս» զր. հ. 217, էջ 110^բ.)

46.

Խոր. (Ողբ). — «Աշակերտք հեղգ առ ուսումն և փոյթ առ ի վարդապետել, որք նախ քան զտեսութիւնն Աստուածաբանք ...»

Գր. Ածաբան.* — «Տես Նոր Հայկ. Բառգիրք, Աստուածաբան բառի տակ ուր Խորենացու այս տողերի մասին ասած է. «տեսել ի բանից Աստուածաբանին»:»

9 ЮНЬ 1899
Центр. Библиот.
Арм. Благ. Общ.

